«Երևանի Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԱՄՍԱԹԻՎ

Ծրագիր

<<Գրական>> խմբակի

Շաբաթական 4 ժամ/136 ժամ

Ուսուցիչ՝ Դ. Կարապետյան

2022-2023

«Գրական» խմբակի տարեկան ծրագիր

136 ժամ

Բովանդակություն

1. Լևոն Խեչոյանի «Միերի դռան գիրքը»՝ որպես ազգային իմացաբանության բանալի - 60 ժամ
2. Գրականությունը որպես մարդու ինքնության ձևավորման հնարավորություն – 76 ժամ

Տարիքային խումբ՝ 14-15 տարեկաններ /8-9-րդ դասարաններ/

Նպատակ

Զարգացնել գրական երկը մեկնաբանելու, արժևորելու, ինքնուրույն կարծիք արտահայտելու կարողություն: Ձևավորել գրական երկը ստեղծագործաբար վերլուծելու, հեղինակի առանցքային գաղափարները ընկալելու և փոխանցելու կարողություն: Ձևավորել գրականությունը՝ որպես ինքնության ձևավորման, ինքնաճանաչողության, ազգային ինքնագիտակցության ընկալման առաջնային բաղադրիչ ընկալելու գիտակցում:

Վերջնարդյունքներ

- Վեր հանել գրական երկում հեղինակի ասելիքի առանցքային կարևորությունը՝ ազգային ինքնությունը կրողի պահանջատեր գիտակցությամբ:
- Վերլուծել հեղինակի ենթատեքստի ասելիքը անհատական մոտեցմամբ և փոխադարձել:
- Կարևորել ընթերցանության մեջ լեզվաոճական գիտելիքների, պատկերավոր մտածողության առկայության դրսևորումը:
- Արժևորել գրականության դերը հոգևոր հայրենիք հիմնելու սկզբնաղբյուր՝ կարևորելով այն նյութական հայրենիքի կայացման մեջ:

Ժամ	Բովանդակություն
Լևոն Խեչոյանի «Միերի դռան գիրքը»՝ որպես ազգային իմացաբանության բանալի 60 ժամ	
Թեմա 1. Լևոն Խեչոյանի «Միերի դռան գիրքը»՝ որպես «Սասնա ծռեր» էպոսի բանահյուսական հիմքի վրա մշակված արձակ ստեղծագործություն 8 ժամ	
Նպատակը. Ձևավորել էպոսի հիմքի վրա ստեղծված «Միերի դռան գիրքը» գաղափարական բովանդակությունն ընկալելու կարողություն:	
Վերջնարդյունքները. Վերարտադրի գրողի կենսագրությունը, ստեղծագործությունների նկարագիրը: Ներկայացնի «Միերի դուռ» գիրքը՝ որպես բանահյուսահիմք ստեղծագործություն	
Բովանդակություն	
1-2	Լևոն Խեչոյանի կյանքը և ստեղծագործությունները
3-4	Լևոն Խեչոյանի ստեղծագործությունների առանձնահատկությունները
5-6	Պատմական թեման՝ որպես ստեղծագործությունների առանցք
7-8	Լ. Խեչոյանի մոտեցումը գրականության վերաբերյալ: Հարցազրույց Հ. Մաթևոսյան և Լ. Խեչոյան
Թեմա 2. «Միերի ռան գիրքը»՝ որպես պատմախոսական ուղերձ 16 ժամ	
Նպատակը. Ձևավորել էպոսի՝ խեչոյանական ընկալման մոտեցումները վեր հանելու կարողություն:	
Վերջնարդյունք Նկարագրի էպոսի՝ խեչոյանական ընկալման մոտեցումները Վերլուծի ազգային վեպի գաղափարները կրող հերոսների նկարագիրն՝ ըստ հեղինակի մոտեցմամբ:	
Բովանդակություն	
9-12	Էպոսը գրական սռեղծագործության ատաղձ, մշակութային դաշտը վերափոխելու ձգտում և ձիրք

13-16	Ազգային վեպի գաղափարների, հերոսների բացահայտումը Լ. Խեչոյանի «Միերի դուռ» գիրքում
17-20	Ազգի գոյաբանական իմաստը մեկնաբանելու բանալին՝ գրողի և մարդու գոյությունն այս աշխարհի վրա հիմնավորմամբ:
21-24	«Ինձ արևն է կարգել, որ Ագռավաքարը մտնեմ…» հատվածի ընթերցում և վերլուծում

Թեմա 3. Հայրենիքի հետ հաղորդակցվելու և նրա հետ միավորվելու գաղափարի արտահայտությունը

12 ժամ

Նպատակը.

Ձևավորել «պատերազմ և հայրենիք» հասկացությունների մեկնաբանումը հեղինակի տեսանկյունից վերլուծելու հմտություն:

Վերջնարդյունք

Վերլուծի դասախոսի և ուսանող Վիկտորի զրույցի ուղերձը:

Արժևորի իր մեջ ապրող ազգային հերոսների առկայությունը:

Բովանդակություն

25-28	Դասախոսի և ուսանող Վիկտորի զրույցը հատվածի ընթերցում և վերլուծում
29-32	Մեր օրերի իրողություններով համեմված էպոսի գաղափարը՝ մեր մեջ ապրող Դավթի և Փոքր Միերի կերպարների ներկայությամբ
33-36	«Էդ իմ ցեղի ձենն էր եկավ…» հատվածի ընթերցում, մեկնաբանում

Թեմա 4. Լ. Խեչոյանի՝ Ագռավաքարում փակված կենդանի Միերին հանդիպելու նպատակը և իղձը

12 ժամ

Նպատակը.

Ձևավորել **Լ. Խեչոյանի՝ Միերին հանդիպելու նպատակի ուղերձը հասկանալու և մեկնաբանելու կարողություն:**

Վերջնարդյունք.

Ներկայացնի Ագռավաքարում փակված Միերի նախապայմանը և կայացման խեչոյանական ուղերձը

Ցուցաբերի անհատակն մտորումներ թեմայի վերաբերյալ:

Բովանդակություն	
37-40	Ագռավաքարի նախամարդ արգանդում փակված Մհերը
41-44	Մհերի որդի չունենալու հանգամանքը՝ որպես հոգևորի որդեծնության շարունակություն
45-48	Վերափոխման ժամանակին հասնելու խեչոյանական գիտակցումը՝ ներսը դուրս արտահանելու և դուրսը ներս ներմուծելու ընթացքով:

Թեմա 5. Հայերենը շարադասելու և շարահյուսելու խեչոյանական իմացության դրսևորումը

6 ժամ

Նպատակը.

Ձևավորել հայերենը շարադասելու և շարահյուսելու խեչոյանական իմացությունը գնահատելու, հեղինակի լեզվական խորհրդանիշները մեկնելու կարողություն:

Վերջնարդյունքը

Առանձնացնի բնագրում եղած լեզվական խորհրդանիշները

Մեկնաբանի կարևորի հայերենը շարադասելու և շարահյուսելու խեչոյանական մոտեցումը

Բովանդակությունը	
49-50	Լեզուն՝ որպես նյութը իմաստավորելու գիտակցում
51-52	Լեզվական խորհրդանիշները Լ. Խեչոյանի մոտ
53-54	«Մեր գլխավերևում՝ մեկ անգղ, մեկ արծիվ…» հատվածի ընթերցում և վերլուծում

Թեմա 6. Ազգային հակասությունների պատճառները Լ. Խեչոյանի գրքում

Նպատակը

Ձևավորել պետականության կայունության խեչոյանական ըմբռնումը գիտակցելու, մեկնաբանելու կարողություն, ազգի պետականությունը ներսում կրողի հավաքական կերպարի գիտակցում:

Վերջնարդյունքը.

Մեկնաբանի ազգային հակասությունների պատճառները հեղինակի մոտեցմամբ՝ արտահայտելով անհատական տեսակետ:

Կարևորի ընտանիքի արժեքը՝ որպես կայության պետության երաշխիք

Բովանդակությունը	
55-56	«Մեր կորուստը մեզնից է, եթե մեր ուժը տալիս ենք մեր բնազդներին» հատվածի ընթերցում, մեկնաբանում
57-58	Համերաշխ ընտանիքը՝ որպես կայուն պետության հավաստում
59-60	Բանաստեղծությունը կեցության և գոյության սահմանագլխին
Գրականությունը որպես մարդու ինքնության ձևավորման հայեցակարգ **76 ժամ**	
Թեմա 7. Ռիչարդ Բախ «Ջոնաթան Լիվինգսթոն ճայը» գրքի ուղերձը **22 ժամ**	
Նպատակը Զարգացնել Ռիչարդ Բախի ստեղծագործության ուղերձը մեկնաբանելու կարողություն, մարդու մեջ անհատականությունը կարևորելու ձգտում:	
Վերջնարդյունք Մեկնաբանի Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն ճայը» ստեղծագործությունը՝ շեշտադրելով անհատականություն ունեցող մարդու կարևորությունը: Գնահատի առօրյայի և երազանքի միջև ընտրություն կատարող անհատին	
Բովանդակություն	
61-62	Ռիչարֆդ Բախի կյանքը և ստեղծագործությունները
63-66	Ինքն իրեն որոնող մարդը առօրյայի և երազանքի ընտրության առջև
67-70	Իրական Ջոնաթան Ճային, որն ապրում է յուրաքանչյուրիս մեջ
71-74	Երամակիցներից տարբերակվելու որոշումը
75-78	Լույս ձգտողի դժվարությունները՝ որպես անհատականություն ձևավորելու ընթացք
79-82	«Ինչու՞ մենք քիչ ենք այստեղ, Սալիման», -հարցրեց ճայը… հատվածի ընթերցում և մեկնաբանում: Ճայի և Դալիմանի երկխոսության իմաստը:
Թեմա 8. Հենրիկ Էդոյան «Լույսը ձախ կողմից» ժողովածու **12 ժամ**	

Նպատակը. Ձևավորել հեղինակի ստեղծագործությունների ուղերձի ընկալում՝ որպես ժամանակից պոեզիայի արտահայտություն:	
Վերջնարդյունքներ Նկարագրի հեղինակի ստեղծագործական ուղին, ստեղծագործությունների առանձնահատկությունները: Մեկնաբանի և արժևորի ժամանակակից պոեզիայում նրա դերը:	
Բովանդակություն	
83-84	Հենրիկ Էդոյանի կենսագրությունը և ստեղծագործությունները
85-86	Հարցազրույց Արքմենիկ Նիկողոսյանի հետ: «Ոչ ոք մարդուն չի պաշտպանում»
87-88	Պոեզիայի գոյաբանական և ծագումնաբանակն առեղծվածը: «Շուրջս ոչինչ է, որ դու կարող ես»
89-90	Գրողի հայացքով քննվող ժամանակը: «Գտա ևս մեկ օր»
91-92	Մեր ժամանակի մարդը, գրողի դերը ժամանակի մեջ: «Դու մենակ չես»
93-94	Գրականությունը մարդուն ազատություն ընձեռելու միակ հնարավորություն
Թեմա 9. Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծությունները **22 ժամ**	
Նպատակը Զարգացնել Հ. Գրիգորյանի բանաստեղծությունները վերլուծելու, առանձնահատկությունները վեր հանելու, նրա դերը արդի պոեզիայում կարևորելու հմտություն:	
Վերջնարդյունք Նկարագրի հեղինակի ստեղծագործական ուղին, ստեղծագործությունների առանձնահատկությունները: Վերլուծի և մեկնաբանի հեղինակի պոեզիայի առանձնահատկությունները	
Բովանդակություն	
95-96	Հովհաննես Գրիգորյանի կյանքը և ստեղծագործությունները
97-98	Բանաստեղծությունը կեցության և գոյաբանության սահմանագլխին:

99-100	Քառսին հակադրվող գրականություն:
101-102	Ժամանակի մեջ ժամանակ վերապրող բանաստեղծը:
103-104	Բառը՝ որպես բանաստեղծի արարչականության սկիզբ:
Հովհաննես Գրիգորյանի հայրենասիրական բանաստեղծությունները	
105-106	«Սա իմ երկիրն է»
107-108	«Հայրերի հողը»
109-110	«Բոլորովին ուրիշ աշուն»
Հովհաննես Գրիգորյանի սիրային քնարերգությունը	
111-112	«Նամակը, որ երբեք քեզ չի հասնելու»
113-114	«Ո՞ր տողից »
115-116	«Ինչ-որ բան գտնելիս, կորցնում եմ քեզ»
Թեմա 10. Աղասի Այվազյան. Պատմվածքներ **20 ժամ**	
Նպատակը Զարգացնել ժամանակակից մարդու հոգեկերտվածքի հակասությունները Աղասի Այվազյանի ստեղծագործությունների միջոցով վեր հանելու կարողություն:	
Վերջնարդյունքներ Մեկնաբանի Ա. Այվազյանի ստեղծագործական ուղու առանձնահատկությունները՝ կինոբեմադրիչի և նկարչի ուղղորդմամբ: Գնահատի նրա դերը ժամանակակից արձակի մեջ:	
Բովանդակություն	
117-118	Աղասի Այվազյանի կյանքը և ստեղծագործությունները
119-121	Հարցազրույց Արմեն Մազմանյանի հետ
122-124	«Չիխլին» («Շունը») պատմվածքը
125-127	Ժամանակակից մարդու ներաշխարհի հակասությունը իրականի և անիրականի համադրումով
128-130	«Զարմանալի երկոտանիները» Չիխլիի աչքերով

131-133	Ա. Այվազյանը որպես կինոբեմադրիչ: Ցեղի տեսակը, հայրենիքը սիրելու խնդիրը «Հողի տերը» պատմվածքում
134-136	Աղասի Այվազյան «Մտորումներ հեղինակ և սցենարիստ համադրության մասին»